

չորդուս են ու աւեր սփռում մեր հողեկան աշխարհում, անապատը, ամայութիւնը բաժին թողնելով մեզ:

Նայեցէք մեր հասարակութեան հետաքրքրութեան, դիտեցէք նրա հողին և այնտեղ կամ անցեալ դաղափարների անշուք բեկորների կոյտեր կրտսնէք և կամ դատարկութիւն, մեռելային լռութիւն:

Բնութեան և հողու բոլոր սրբութիւնները տարէց-տարի հրապարակ հանելով մեր ժամանակում քննադատեցին անխղճօրէն, անմտօրէն և իրենք էլ իրենց գոյութեան հիմքը խախտելով մնացին անլոյս խաւարի, չարութեան ոգու ցանցերում:

Եւ այժմ էլ երբ հին ու նոր աստուածներին են հրապարակ հանել և իմաստունն ու տգէտը իրենց կարծեցեալ իմաստութեամբ փշուր-փշուր են աւնում այդ աստուածներին ևս, ենթագրելով, թէ հողու ծնունդը մահկանացու է, կարծես ամեն ինչ դառնում է անիմաստ և կեանքը, և մարդը, և աշխարհը:

Յարաբերական դաղափարներով միայն ապրող մեր ժամանակի մարդը կորցրել է լաւի ու վատի, բարու ու չարի գաղափարը:

Ամեն ինչ ճաշակի հարց է դարձել և միայն սրամաղբութիւնն է իշխողը:

Մէկի համար լաւ է, միւսի համար վատ, մէկի համար բարին՝ միւսի համար չարի կերպարանք է ստանում:

Եւ ինչո՞ւ, որովհետեւ մարդիկ չունին մի անքննելի սրբութիւն, չկայ նրանց համար մի ճշմարտութիւն, որին հաւատան անպայման. չունին նպատակ, որով հիմնաւորեն իրենց անգոյն գոյութիւնը:

Ահա այս յիշուի մտահոգութեան առարկայ եղող դրութեան հանդէպ է, որ կանգնում է Փրկիչը իր հողու անգրկելի մեծութեամբ, իր գաղափարի վեհութեամբ ու մրբիկից խելակորոյս դարձած, ձեռքերն ամեն կողմը ուղղուած մարդկանց կանչում է բարձրագոյն «Ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք»:

Յարութեան իմաստալի ու խորհրդաւոր ատենին հայ ժողովուրդի ականջին թող բարձր հնչէ այդ մեծ խօսքը, թող նա ականջ դնէ յուսալի այդ ձայնին ու ուղղէ իր մոլար գնացքը դէպի Նա՝ Մեծ Վարդապետը:

Ճշմարտութեան մեծ սիրով ապօրուած, կեանքի և նրա ճանապարհի իմաստն ըմբռնելու մեծ ցանկութեամբ ոգևորուած թող դիմէ հայ ժողովուրդը ոգու սովի արհաւիրքները խորտակող Փրկիչին և այն ժամանակ նա կը կարողանայ յիշուի ինքն էլ յարութիւն առնել հողեպէս, ինքն էլ ասել գիտակցօրէն «Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

1912 ԹՈՒԻ ՌՈՒՍԱՀԱՅ ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ

XIII

ՅՕԲԵԼԵԱՆՆԵՐ, ԴԱՍԱՄՕՍՈՒԹԻՆՆԵՐ

Յօրելեանք.

Երկու նշանաւոր յօրելեաններից իր նշանակութեամբ համեմատաբար աւելի փոքր «Մշակի» հրատարակութեան 40-ամեակը մամուլի մէջ թեր և դէմ կարծիքների պատճառ է դառնում:

Անհաշտ հակառակորդ «Հորիզոնը» (մասամբ էլ «Երթարալան») գրում է հակառակ այդ յօրելեանի, նախ աշխատելով ապացուցանել, որ այս տարի չի լրանում թերթի 40-ամեակը, որովհետեւ 1885 թուին թերթը չի հրատարակուել, և երկրորդ՝ որ այժմեան «Մշակը» հիմնադիր Գր. Արծրունու ուղղութիւնից չափից դուրս հեռացել է և որ նրա նախկին աշխատակիցներից աչքի ընկնողներից ոմանք էլ հէնց այդ պատճառով հեռացել են: «Մշակն» էլ իր հերթին ի հարկէ աշխատում է հերքել յիշեալ առարկութիւնները. մի կողմից աշխատում են ցոյց տալ, որ «Մշակը» իր յօրելեանը կատարելով խանգարում է համադրային մեծ յօրելեանն՝ ըստ արժանոյն կատարելուն, իսկ «Հորիզոնը» համար էլ գրում է, որ «Մշակին» հակառակորդ լինելու պատճառով աշխատում է խանգարել այդ յօրելեանը:

Աւելորդ եմ համարում մանրամասն յիշել երկու թերթերի միջև եղած այդ առթիւ բանակուիւնները, որովհետեւ չափազանց անվայել են հայ մամուլի համար այդ յօդուածները թէ ոճի, թէ բովանդակութեան ու մէջներն եղած միտումների տեսակէտից: Այս յօրելեանի առթիւ եղած այդ անպատուաբեր բանակուիւր ցոյց է տալի, թէ սրբան դեռ նեղսիրտ, անհամբերատար է մեր կենդրոնի մամուլն առհասարակ և իրօք մեղանում չկայ համոզմունքի պայքար, այլ անցած-դարձածի առանցքը անձնական շահն է. մի լաւ ապացոյց թէ ո՞վ է մեզ դաստիարակում և այդ դաստիարակութեան արդիւնքն ինչ կը լինի. իրականութիւնը պատասխանը տալիս է:

Յօրելեանը կատարելու համար թիֆլիզում կաղմոււմ է «Կենդրոնական յօրելեանական յանձնաժողով»:

42 հոգուց բաղկացած, պատուաւոր նախագահութեամբ Գ. Սուեդուկեանի, փոխ-նախագահն է Յովհ. Սպենդիարեանն Յանձնաժողովը առանձին կոչ է տպում լրագիրներում, այլև թղթեր է ուղարկում հիմնարկութիւնների և նշանաւոր անձանց, Հիմնարկութիւններից ոմանք, այլև թղթակիցներ, գրողներ թերթերում իրենց դժգոհութիւնն են արտայայտում ներկայ «Մշակի» ղեկավարներին, որ թերթը չեղել են հիմնադրի բուն նպատակից և աւելի պահանջողականութեան են մօտեցել. իսկ շատ աւելի շատերը հեռագիրներով, գրութիւններով իրենց համակրանքն են արտայայտում «Մշակը» սկսում է թերթին կից կէս թերթից բաղկացած յատուկ յաւելուածներ տալ, ուր գետեղում են Գր. Արծրունու «Մշակի» և միւս գրողների մասին յիշողութիւններ, հեռագիրներ, ուղերձներ կայն, այդպիսի յաւելուածներ լինում են մօտ 16-ը, Չանագան հիմնարկութիւններ, անձինք տարբեր ձևերով են արտայայտում իրենց համակրանքը ուսանայ ներկայ մամուլի աւագագոյն անդամի յօրելեանի աթիւ. լուսանկարիչ Տէր-Ղևոնդեանը լուսանկարում և հրատարակում է թերթի աշխատակիցների և երկարամեայ թղթակիցների խմբական նկարը «Տարազը» հրատարակում է յօրելեանական արմանախ բազմաթիւ նկարներով և յօդուածներով, գինը 3 ու. թիֆլիզում հայ կանայք ժողով են կազմում և որոշում են իրենք ևս մասնակցել այդ յօրելեանին, տալիս են մի ներկայացում «Բանդած օջախ» «Մշակի» օգտին և ապա հրատարակում են թերթում հայ կանանց մասին լոյս տեսած յօդուածները. լոյս է տեսնում դեռ Ա. հատորը, «Մշակը» և հայ կիներ» խորագրով, գինը 1 ու. Հանգուցեալ դրամատուրգ Գ. Սուեդուկեանը թոյլ է տալի, որ իր գրածները՝ «Համալի մտալահաթնիրը» վերնագրով՝ վաճառուի յօգուտ թերթի ապահովութեան ֆօնդին. գրքոյի գինը 30 կ. է. Փոխարքան թոյլ է տալի Կովկասի սահմաններում ժողովարարութիւն անել մինչև տարուայ վերջը յօգուտ թերթի ապահովութեան. հանգանակիչ մասնաժողովներ են կազմում նաև Բագու, Մոսկուա կայն: Յօրելեանական յանձնաժողովը գրութիւններ է ուղարկում յօրելեանին մասնակցելու նաև ուս, վրացի և օտարազգի հայ թերթերին: Յօրելեանի հանդէսի կարգն է՝ մայիսի 18-ին «Վրդիւր-Տարազի» սալօնում երեկոյթ, 20-ին Արախատական ընկերութեան թատրոնում հայ կանանց կազմակերպած ներկայացումը, 26 ին հոգեհանգիստ հիմնադրի և հանգուցեալ բոլոր աշխատակիցների համար, իսկ երեկոյեան Արքունական թատրոնում յօրելեանական հանդէս. 27-ին որևէ ակըմբանոցում վճարովի բանկէտ: Լ. Գանիէլեան գրում է «Մշակի» 40-ամեակի գիրքը, ուր ինքն էլ խոստովանում է, որ հապճէպ է գրուած և շատ աշխատակիցների անուններ չեն յիշուած: Կարելի է ասել հայութեան բոլոր վայրերից լինում են շնորհաւորականներ, ուղերձներ, որոնց անունները այստեղ մի առ մի թուել այստեղ անկարելի է: Մինչև տարուայ վերջը շարունակում են տպել այդ ուղերձները, որոնց մէջ երևում է, թէ՛ սրբան մենք յափշտակուել, ուռցնել գիտենք մի որևէ գործ, սրբան

ընդունակ ենք գնահատելու փաստերն ըստ արժանոյն. յիշեմ միքանի օրինակներ այդ չափազանց չալլ գովասանքներից, որոնք աւելի ծիծաղելի են դարձնում յօրելեանը, քան պատիւ բերում. «Մշակը» ամբողջ հայութեան սիրան է, «Մշակն» է հայութեան դարկերակը, «Մշակն» է հայութեան ձուլարանը կայն, աւելի մեծ չափազանցութիւններ կան յաւելուածների մէջ: Գրան հակառակ անա թէ՛ ինչ չափազանցութիւնների մէջ է ընկնում «Հորիզոնը» № 111-ում առաջնորդող է գրում, ուր ասուած է ի միջի այլոց «Մշակի» ղեկավարների հասցէին— «...Խարդախ, բանսարկու հրապարակախօսութիւն, ...անսկզբունք, հողմարած, քսու, ստերով ապրող...»: Երբ այն համարում տպում է Երվանդազէի բուսական կորրեկտ շնորհաւորական նամակը, ամեն կողմից յարձակում են խմբագրութեան վրայ, թէ՛ ինչ իրաւունքով է թերթը տեղ տալի այդ նամակին և խմբագրութիւնը բացատրում է թէ՛ հայ աչքի ընկնող գրողի և թերթի աշխատակցի անհատական կարծիքն է այդ. սր աստիճան անհամբերութիւն և ինչ անվայել լեզու: № 113-ից սկսած «Մշակը» տպում է ուղերձները. այս համարում տպուած են Կաթողիկոսի օրհնութեան կոնդակը, Օրմանեան արքեպիսկոպոսի շնորհաւորական թուղթը: Յօգուտ թերթի ապահովութեան ժողովում է մինչև տարուայ վերջը մօտ 30 հազար ուրլի «Հովիտում» Եղիշէ ա. ք. Կեղամեանը «Իմ շնորհաւորանքը «Մշակի» յօրելեանին» խորագրով թերթի № 33-ից սկսած մի շարք յօդուածներ է տպում, ուր աշխատում է պարզել Գր. Արծրունու գործունէութեան ու ընաւորութեան հակասական կողմերը. հետաքրքրական են որոշելու համար, թէ՛ ինչպէս մեզանում մինչև այժմ առհասարակ իրենց ազատամիտ հռչակող գործիչների նկարագիրները առաւելապէս պարզարանուած են համակրողների կողմից, իսկ հակառակորդների կարծիքը դեռ յայտնի չէ, ուստի և այդ գործիչների կեանքն ու գործունէութիւնը առաւելապէս լուսաւոր կողմերով է երևան գալի, իսկ այս միակողմանիութիւնը մեր գնահատման յատկանիշն է և մեր կեանքի անախորժ գրոյմը: Յաւօք սրաի պէտք է խոստովանել, որ հէնց աւագագոյն թերթը մինչև այժմ չի կարողացել իրեն ազատագրել այդ վտանգաւոր ու անպատուաբեր յատկութիւնից և մինչև այժմ էլ շարունակում է այն անհամբերութեան ոգին, որը յատուկ էր թերթի հիմնադրին և որը մեր կեանքի պառակաման աղբիւր է դարձել մինչև այժմ:

Աւելի խոշոր տարածայնութիւնների, բանակուիւնների և դժգոհութիւնների շարքերով է շրջապատում համազգային մեծ յօրելեանի՝ տառերի գիւտի 1500-ամեակի և հայկական տպագրութեան 400 ամեակի խնդիրը: Նախ հարց է ծագում, թէ՛ երբ է եղել առաջին հայկական տպագրութիւնը. Սա. Մալխասեանը պնդում է, որ 1512 թուին տպուած կիսօգրաֆիա է եղել և ոչ թէ՛ իսկական տպագրութիւն, այս առթիւ հեղինակն առաջարկում է Վիէննայի և Վենետիկի կարող միաբաններին յայտնել իրենց կարծիքը: Լէօն պնդում է, որ 1512 թուին է եղել և այդ կիսօգրաֆիա չէ: «Մշակ»-ում Խաթ ստորագրու-

թեամբ մէկը ստում է, որ Լէօն իր «Հայկական տպագրութիւն» գրքում առաջին տպագրութիւնը 1513 թուին է գրում. Լէօն հակառակն է պնդում և այսպէս մի շարք վէճեր: Մտիթարեանները կողմից հ. Մէնէվիչեանը հաստատում է, որ կախարհափրա չէ, Ստ. Մալխասեանը այնուամենայնիւ չի համոզում: Այնուհետև հարց է բարձրանում հայկական տառերի գիւտի յօրելեանը միացնել այս յօրելեանին. Լէօն դիմում է Էջմիածնի միաբան գիտնական Գալուստ Տէր-Մկրտչեանին պարզելու հայ տառերի գիւտի թուականը, սա էլ մի յօդուածով ցոյց է տալի, որ տառերի վերջնական իրագործումը եղել է մօտ 412 թուին և ոչ թէ 404-ին կամ 406-ին, ինչպէս մինչև այժմ էր ընդունւում:

Տօնակատարութեան տեղի և ժամանակի համար երկար վէճեր ու բանակցութիւններ են տեղի ունենում. ոմանք թիֆլիզն են ուզում կենդրոն հրատարակել և տօնը մայիսին կամ նոյեմբերին կատարել, ոմանք էլ Էջմիածինն են հրատարակում կենդրոն: Վեհափառը իր վրայ է աւելում տօնի պատուաւոր հովանաւորի դերը և հոկտ. 13-ին է նշանակում յօրելեանի օրը. առանձին կոնդակով այդ որոշումն էլ ի կատար է ածում: Արժէ սակայն մի երկու խօսքով նկարագրել տօնի տեղի և ժամանակի առթիւ եղած վէճերը, կրկին ցոյց տալու մեր ոչ այրքան հանրային շահով, որքան անձնականով առաջնորդուելու կողմը:

Փետրուարի 8-ին թիֆլիզի դումայի դահլիճում ժողով է գումարւում, 28 ձայնով ընդգէմ 24 ի որոշում է կատարել տօնը և պարտադիր յանձնաժողով ընտրել. «Մշակի» և «Արօրի» կողմից Ա. Եղեկեան յայտարարութիւն է տալիս գրաւոր, որ մշակականութիւնը ողջունում է այդ տօնը, բայց պնդում է, որ նախ ըննուի թուականը, ապա տօնը կատարուի: Այս խնդիրը ուշադրութեան չի առնում և 55 ձայնով ընտրութիւն են կատարում. ընտրում են 15 հոգի՝ 1) Բժ. Զարգարեան, 2) Ալ. Խատիսեան, 3) Գ. Կաֆեան, 4) Գր. Վարդանեան, 5) տիկ. Միլեան, 6) տիկ. Ալիբէգեան, 7) Յ. Խունուեց, 8) Յ. Ակունեան, 9) Իս. Յարութիւնեան, 10) Ա. Աթանասեան, 11) Ս. Լալայեան, 12) Լէօ, 13) Երվանդադէ, 14) Բժ. Մինասեան, 15) Նար-Գոս. պատուաւոր անդամներ են ընտրւում՝ Եփրեմ եպ. թիֆլիզի թեմի կառավարիչ և Գ. Սունդուկեան: Մայր Աթոռում ևս այս հարցը ձեմարանի մանկավարժական ժողովում քննութեան առնուելուց յետոյ Վեհափառի յատուկ կոնդակով յօրելեանական յանձնաժողով է կազմւում, որի անդամներն են՝ 1) Մեսրոպ եպ., 2) Բագրատ վարդ., 3) Մատթէոս վ., 4) Ներսէս վ. Մելիք-Թանգեան, 5) Գարեգին վ., 6) Բարգէն վ., 7) Գալուստ Տէր-Մկրտչեան, 8) Ստ. Կանայեան, 9) Մ. Արեւիկեան, 10) Գ. Ալթունեան, 11) Ռ. Տ.-Արրահամեան, 12) Գ. Էղիլեան. այս յանձնաժողովն առաջարկում է տօնը հոկտ. 13 ին կատարել և յաւերժացնել տօնը ընդհանուր դպրոցական ֆօնդ հիմնելով. թիֆլիզի յանձնաժողովն առաջարկում է գրական ֆօնդ կազմել: Այս առթիւ եղած տարաձայնութիւններին վերջ

տալու համար թիֆլիզի յանձնաժողովին առաջարկւում է Էջմիածնին համաձայնութեան գալ, պառակտում առաջ բերելու. Կ. Պօլսում ևս կազմւում է յանձնաժողով, որ մի շարք որոշումներ է անում:

Մամուլից այնպէս է երևում, որ Էջմիածինը անհնար է գտնում թիֆլիզի առաջարկած պայմաններով համաձայնութեան գալ, «Մշակն» էլ կողմնակից է լինում Էջմիածնի յանձնաժողովին, Էջմիածինը համազգային կենդրոն լինելու պատճառով, թիֆլիզի յանձնաժողովը դիմում է Վեհափառին, որ հովանաւոր լինի յանձնաժողովին, բայց դիւանապետի հեռագիրը և թուղթը 16-ի մարտի 1912 թ. № 360 այդ մասին բան չի ստում, ուստի և թիֆլիզը որոշում է աօնել նոյեմ. 26-ին, թէև այդ որոշումը վերջ ի վերջոյ չի իրագործւում, Քնչ պատճառով, յայտնի չէ. հաւանականօրէն երևի նրա համար, որ Վեհափառը մեծ տօնի համար մի ամբողջ տարի է նշանակում 1912 թ. հոկտ. 13-ից մինչև 1913 թ. հոկտեմբ. 12-ը, երբ կը լինի հանդիսաւոր փակումը, այս ժամանակամիջոցում կարող են բոլոր հիմնարկութիւններն էլ իրենց յարմար ժամանակին տօնել: Վեհափառն է Փոխարքայից թոյլտուութիւն ստանում փոխարքայութեան սահմաններում ժողովարարութիւն անելու յօգուտ դպրոցական ֆօնդի և միայն 1913 թ. յունուարին յաջողւում է այս առթիւ թեմակալներին հրահանգութիւններ ուղարկելու, որ կազմեն ժողովարարութեան համար յանձնաժողովներ յատուկ ժապաւինեալ մատենաներում: Չանգան քաղաքներից էլ դիմումներ են լինում երկու յանձնաժողովներին միանալ և պառակտման պատճառ չլինել, օրինակ՝ Ալալքալաքից, Վաղիկավաղից: Մատթէոս վ. թիֆլիզում սեպտ. 9-ին մասնաւոր ժողովներ է ունենում համաձայնութեան առթիւ. որոշում են առժամայն յետաձգել. Յովհ. Թումանեան ևս առաջարկում է ի նկատի ունենալով սեպտ. 11-ից սկսած տաճկահայերի մասսայական կոտորածները՝ յետաձգել տօնը մի տարով: Էջմիածնի որոշմանը դէմ են լինում «Հորիզոն», «Ղարաբաղ», «Կոստ», «Արագած», «Երկրից», այլև Երևանի թեմի մի խումբ ուսուցիչներ, թուով 25 հոգի, չեն ուզում հպատակուել Վեհափառի որոշմանը, սրանց այս ըմբոստութեան դէմ բողոքում են Նոր Նախիջևանի թեմական գաղափարի մանկավարժական և հոգաբարձական խմբերը թէև «Մշակն» էլ առաջարկում էր կոտորածն ի նկատի ունենալով յետաձգել տօնը, բայց թիֆլիզում Մանթաշեանի առևտրական գալստի դահլիճում ինտելիգենտներից կազմած ժողովին ինքն էլ մասնակցում է, որ Էջմիածնում կատարւող հանդիսին մասնակցեն և թիֆլիզի յայտնի է, որ Ա. Քալանթար, Հ. Առաքելեան, Ստ. Մալխասեան հայլք գնում են Էջմիածին և մասնակցում հանդիսին: Հանդէսը կատարւում է մի մասը Օշականում ս. Մեսրոպի գերեզմանի վրայ, ուր ներկայ են լինում Վեհափառը և զանազան տեղերից եկած պատգամաւորները, միւս մասն էլ Էջմիածնում. բոլոր եկեղեցիներում հոգեհանգիստ է կատարւում, դպրոցներում էլ հանդէս հոկտ. 13-ին: Տօնի առթիւ հրատարակում են

գրքոյկներ՝ Լէօի «Հայ գրի տօնը» և Գ. Ալթունեանի նոյն տեսակ աշխատանքը: Բոստօնում ևս կատարուած է այդ տօնը, որ ամերիկահայ ուսանողներն են կազմակերպուած: «Ազգագրական Հանդէսը» 1913 թ. հոկտ 6—12-ը կազմակերպելու է հայ գրքերի ցուցահանդէս տօնի առթիւ: Կովկասի Հայոց Հրատ. Ընկ. 500 ո. մրցանակ է նշանակուած հայ տպագրութեան 400-ամեայ պատմութեան համար, որը բաղկացած պիտի լինի հետեւեալ մասերից՝ 1) հայ տպագրութիւնը սկզբից մինչև մեր օրերը, 2) հայ տպարանը իբրև կուլտուրական հիմնարկութիւն, 3) Հայ տպագրութիւնն իբրև գրական շարժումների գործօն: Եւրոպայում միտք է յղացել տօնի առթիւ հրատարակել «Սիւնիք» վերնագրով մի արմանախոս Երեսնում ևս ցանկութիւն է յայտնուած մի ժողովածու հրատարակելու, թէև առայժմ ոչ մէկը այդ ժողովածուներից չի հրատարակուել:

Մեծ տօնը իր ընդարձակ բովանդակութեան շնորհիւ բազմօրինակ ցանկութիւնների հնարաւորութիւն է տալի, որոնցից մի քանիսը կարևոր եմ համարում յիշատակելու, որովհետև սրանք ևս առանձին ուշադրութեան արժանի են և պէտք է ձգտել որևէ կերպ իրականացնել. մեծ տօնը ունի մեծ կողմերի հետ և փոքր կողմեր, այդ փոքրերին բաւարարելը կը նպաստէ իրօք տօնը լրիւ, ամբողջական կատարելուն: Մի գրաշար «Մշակչութեան առաջարկում է գրաշարներին նպաստող ֆօնդ կազմել. չէ որ իրօք հայ տառի և գրքի տպագրութեան վրայ անմիջապէս աշխատողը, աչք ու թոք մաշողը գրաշարներն են, որոնց օգնելն անհրաժեշտ է: Ստ. Մալխասեանը առաջարկում է ի միջի այլոց հրատարակել «Պարզատոմարը» — առաջին տպագրուած հայ գիրքը: «Հորիզոնը» առաջարկում է հայ գրողների ընկերութիւն կազմել, որ և յաջողուած է. մի ուրիշն առաջարկում է հայերի մէջ գրագիտութիւն տարածող ընկերութիւն հիմնել. առաջարկում են «Հայոց պատմութիւն» տալ ժողովրդին, որովհետև մինչև այժմ եղածները չեն բաւարարում այլևս մեզ. հայ հեղինակների գրուածքները էժան զնով հրատարակել, որ ժողովրդին մատչելի դառնայ և ընթերցասիրութիւնը տարածուի: Էջմիածնում մատենագարանի առաջ կանգնեցնել ս. Մեսրոպի արձանը. Օշականում ծխական դպրոցը դարձնել ս. Մեսրոպեան, դարձնել 4 դասեան, գերեզմանի վրայ յուշարձան կանգնեցնել: Ռորուում է Էջմիածնում գիտական ժողովածու հրատարակել, դիմում են այս առթիւ կարող անձանց: Առաջարկում են տառերի ձևը փոխել, աւելի պարզ, կոկ դարձնել, լաւ տառեր ձուլել, որ դասագրքերում տառերը պարզ լինեն և երեսմաները չժողովուեն, ևայն ևայն: Այս ցանկութիւններն ըստինքեան ցոյց են տալի, թէ սրբան ցաւոտ կողմեր ունի մեր անմշակ կեանքը և ինչպէս երբ մի բան տեղից շարժում ենք հազարաւոր խնդիրներ են ծագում, որոնց բաւարարելն անհրաժեշտ է, սակայն սրունցից շատ քչերն են բաւարարում:

Համազգային մեծ յօրհանրել իր սկզբնաւորութեամբ դժգոհութիւնների և երկարաւակութեան առիթ գառնա-

լով՝ ըստ արժանւայն շտօնուեց. թէև երկու խոշոր նորութիւն առաջ եկաւ մեր կեանքում—դպրոցական ֆօնդ և գրողների ընկերութիւն, երկուսն էլ անհրաժեշտ, երկուսն էլ համակրելի և հայ մարդը պէտք է մինչև 1913 թ. հոկտ. 12-ը աշխատէ դպրոցական ֆօնդին չխնայել իր լուծան. իսկ նորակազմ գրողների ընկերութիւնը պէտք է հայ դպրոցի պակասութիւնները լրացնելու մասին հոգայ՝ դասագրքեր և օժանդակ ձեռնարկներ ու ընթերցանութեան գրքեր մատակարարելով: Երկարաւակութեան ոգին միջից հեռացած համարելով, յոյս ունենանք, որ գոնէ 1913 թուին համազգային յօրհանրելի վերջաբանին ցոյց կը տանք մեր միութեան համերայխութեան նախանձախնդրութիւնն ու այս ձևով վերջ կը դնենք այն շարունակական ձեռն յօրհանրական հանդիսակատարութեան, որ մեզանում վերջերս համաճարակի բնոյթ է ստացել: Գնահատել ուրիշի վաստակը և պարտաւորութիւն զգալ հասարակական աշխատաւորի կամ հիմնարկութեան գործունէութիւնը զնահատել՝ անպայման անհրաժեշտ է, սակայն աշխատենք ձեւակօնութիւններից հեռանալ և բովանդակութեանը մօտենալ, ձեն առհասարակ մեռած է, բովանդակութիւնն է հետաքրքրել, հայ ժողովուրդը ամենից աւելի ընտիր բովանդակութիւն ունեցող աշխատանքի, գործի է կարօտ:

Pessimist

ԶԱՏԿԱԿԱՆ ԸՆԾԱՆԵՐ

Քաղաւաք Գարբիէլ Սունդուկեանի երկերից

Հայաստանը՝ ինքն իրան.

Վուրթէնն էլ մտիկ իմ անում, տեսնում իմ վուր իմ ազատութենի համա վունչինչ ճամփոյ չկայ... հարաթ պիտի մտանջվիմ էսէնց, ինչու մէ շարա ըլի գլխիս...

Հայոց հարցին.

Հազար էլ գլուխդ քարը տաս, վունչինչ չիս կանա օտկի, թէ տէրիւր չին ուղում...

Եւրոպան՝ տաճկահայերին.

Էդ խօսքիւրը վուր ասում իք՝ իմանում իմ, ամա սիրտս քար է կարուի ձիգ համա...

Հայոց ազգը՝ իր առաջնորդներին.

Խնդրում իմ, թէ կարելի է, էսէնց տանիք ինձ, վուր ճանփին չջարդուիմ...

Բերլինի դաշնագրի 61 յօդուածին.

Եարաբ ինչ պիտի ըլի քու վիրչը...